


Հավելված՝ Հայաստանի
Հանրապետության
Վայոց Ձոր մարզի Վայք
համայնքի ավագանու
2016թվականի դեկտեմբերի
12-ի N որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՎԱՅՔԻ ՀԱՄԱՅՆՔ



ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ
ԾՐԱԳԻՐ

(2017-2021թթ.)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ

ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ
2017-2021 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ

Ծ Ր Ա Գ Ի Ր

Կազմել է՝ համայնքի ղեկավար՝

/Թ. ԱՎԵՏՅԱՆ/

Հաստատվել է համայնքի
ավագանու 2016 թվականի

որոշմամբ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Համայնքի ղեկավարի ողջույնի խոսք	3
2. Համայնքի իրավիճակի նկարագրություն	4
2.1. Համայնքի ընդհանուր նկարագրություն.....	4
2.2. Համայնքի սոցիալ-տնտեսական իրավիճակը.....	6
2.3. Համայնքում իրականացվող ծրագրերը	7
2.4. Համայնքի ֆինանսական իրավիճակի նկարագրություն և ֆինանսական կանխատեսումներ.....	8
2.5. Զարգացման խոչընդոտներ և դժվարություններ	10
2.6. Համայնքի ուժեղ և թույլ կողմերի, հնարավորությունների և սպառնալիքների (ՈւԹՀՍ) վերլուծություն	11
3. Համայնքի զարգացման նպատակների սահմանում և գործողությունների պլանավորում	12
3.1. Համայնքի զարգացման տեսլական	12
3.2. Համայնքի զարգացման ծրագրերի, նպատակների առաջադրում և կոնկրետ խնդիրների ձևակերպում.....	12
4. ՀՀՄ ֆինանսավորում	18
5. ՀՀՄ մոնիթորինգ.....	19

1. ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՂՋՈՒՅՆԻ ԽՈՍՔ

Վայք համայնքը կազմավորվել է «Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին» ՀՀ օրենքում 2016 թվականի հունիսի 17-ին կատարված փոփոխության արդյունքում՝ ՀՀ Վայոց ձորի Վայք քաղաքային և Ազատեկ, Արին, Ջեդեա գյուղական համայնքների միավորումից և իր վարչական տարածքում ընդգրկում է Հորադիս գյուղական բնակավայրերը: Մակերես՝ 18399,78կմ²: Վայք համայնքը գտնվում է Վայոց Ձոր մարզում՝ Արփա գետի միջին հոսանքի աջ կողմում: Երևանից 135կմ հեռավորության վրա՝ հարավ-արևելք, Երևան-Սիսիան մայրուղու վրա:

Համայնքում առաջիկա տարիներին նախատեսում է իրականացնել հետևյալ ծրագրերը՝ օգտագործելով համայնքի ուժեղ կողմերը, համայնքային բյուջեի միջոցները, ինչպես նաև ՀՀ Կառավարության և այլ միջազգային կառույցների, բարերարների աջակցությունը.

- Փողոցների ամբողջական լուսավորություն
- Ներհամայնքային և հանդամիջյան ճանապարհների բարեկարգում
- Համայնքի մաքրության և բարեկարգման խնդիրների կանոնակարգում
- Զբոսաշրջության զարգացում
- Գյուղական բնակավայրերում երիտասարդական կենտրոնների և մանկական խաղահրապարակների ստեղծում
- Գյուղերում աշխատատեղերի ստեղծում
- Մեքենատրակտորային պարկի ստեղծում
- Այգեգործության բնագավառում գյուղատնտեսական տեխնիկայի ձեռքբերում
- Ներհամայնքային ուղևորափոխադրումների կազմակերպում
- Նոր աշխատեղերի ստեղծում

Համայնքը այժմ համագործակցում է մի շարք պետական և օտարերկրյա ծրագրերի հետ, նախատեսվում է հնարավորինս ընդլայնել համագործակցության շրջականները և ներգրավվել նոր ծրագրեր, մասնավորապես այժմ համայնքը համագործակցում և իրականացնում է ծրագրեր «Հաբիթաթ ֆոր Հյունանիթի Արմենիա» կազմակերպության և Հայաստանի տարածքների զարգացման հիմնադրամի հետ:

2. ՀԱՄԱՅՆՔԻ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

2.1. Համայնքի ընդհանուր նկարագրություն

ք. Վայք (1956-1990 թվականներին՝ Ազիզբեկով), քաղաք Վայոց Ձորի մարզում, Երևանից 137 կմ հարավ-արևելք՝ Արփա գետի ափին: Վայք է վերանվանվել 1990 թվականի նոյեմբերի 23-ին: Եղեգնաձոր քաղաքից գտնվում է 20 կմ, իսկ Երևան քաղաքից 140 կմ հեռավորության վրա և հանդիսանում է Երևան-Գորիս-Արցախ ճանապարհի հանգույց: Տարածքը հյուսիսից, հյուսիս-արևմուտքից շրջապատված է Եղեգիսի, իսկ հարավից Վայոց ձորի լեռնաշղթաների ճյուղավորությունների խիստ կտրտված և թեք լանջերով, միայն հյուսիս-արևմտյան մասում Եղեգիսի լեռնաշղթայի հարավային ճյուղավորությունների վրա հանդիպում են համեմատաբար հարթեցված հեղեղատարով քիչ կտրտված տեղամասեր: Վայքի տարածքով հոսում է Արփա գետը: Գարնանային վարարումները միջին հոսանքում սկսվում են մարտ ամսվա կեսերից, բարձրակետին հասնում են ապրիլին կամ մայիսին, գետի հաստատուն մակարդակը նկատվում է հուլիսի կեսերին: Վարարումները տևում են 90-120 օր: Գետը սնվում է անձրևաջրերով և ձնհալի ջրերով: Գետի վտակները հեղեղաբեր են: Ձմռանը գետը ափային մասում սառցակալում է: Վայքի տարածքի հողային ծածկույթը խիստ աղքատիկ է: Տնտեսությունների թիվը՝ 1870:

Ազատեկ

Բնակավայրի կենտրոնի հեռավորությունը մարզկենտրոնից՝ 24 կմ, Վայքից 7 կմ, Բնակավայրի կենտրոնի բարձրությունը ծովի մակերևույթից՝ 1625 մ, Բնակավայրը ընդգրկված է Վայք համայնքի կազմում: Ազատեկ անունը ծագել է նախկին Ազատ գյուղի անվանումից: Հետագայում 1828 թվականին Խոյից ու Սալմաստից գաղթած հայերը հիմնում են Ազատեկ գյուղը: Տնտեսությունների թիվը 176
Գյուղատնտեսական գործունեության հիմնական ուղղություններն են՝
- անասնապահությունը, - դաշտավարությունը և այգեգործություն, Գյուղատնտեսությամբ զբաղվում է 160 գյուղացիական տնտեսություն: Անասնազխաքանակը 2016թ. հունվարի 1-ի դրությամբ կազմում է. - խոշոր եղջերավոր անասուններ՝ 542 գլուխ, - մանր եղջերավոր անասուններ՝ 596 գլուխ, - խոզեր՝ 20 գլուխ, - մեղվաընտանիքներ՝ 392: - թռչուններ՝ 1058:

Հողային և այլ բնական ռեսուրսներ

Հողեր (ընդամենը)՝ 6685,91 հա, այդ թվում՝
- Գյուղատնտեսական նշանակության հողեր՝ 6542.58 հա, որից՝
- վարելահող՝ 785.09 հա, բազմամյա տնկարկ՝ 76.63 հա, արոտ՝ 2577.96 հա, խոտհարք՝ 61.90 հա, այլ հողատեսք՝ 3041.00 հա ,
- բնակավայրերի հողեր՝ 96.78 հա,
- արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողեր՝ 20.24 հա
- էներգետիկայի, տրանսպորտի, կապի և կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողեր՝ 4.80 հա
- հատուկ պահպանվող տարածքների հողեր՝ 6.62 հա,
- ջրային հողեր՝ 14.89 հա

Փոռ

Արվիա գետի ձախ կողմում, Վայքի լեռների հյուսիսային փեշերին, մարզկենտրոնից՝ 27 կմ հարավ-արևելք: Այն վերաբնակեցվել է 1928 թվականին: Գյուղը շրջապատված է վեհ ու հիասքանչ լեռնաշղթաներով, որոնք հարուստ են ֆլորայով և ֆաունայով: Ազգաբնակչությունը հիմնական զբաղվում է հողագործությամբ, այգեգործությամբ, անասնապահությամբ ու մեղվաբուծությամբ: Տնտեսությունների թիվը 33

Արին,

գյուղ Հայաստանի Վայոց Ձորի մարզում, մարզկենտրոնից՝ Եղեգնաձորից, 22 կմ հարավ-արևելք: Արին գյուղը ծովի մակերևույթից 1630 մ բարձրության վրա է գտնվում: Համայնքը հյուսիս-արևելքից սահմանակից է Հերիեր, հյուսիս արևմուտքից՝ Մալիշկա, հարավից՝ Տնտեսությունների թիվը 70

Տնտեսությունը - Բնակչությունը զբաղվում է դաշտավարությամբ, անասնապահությամբ, մեղվապահությամբ և այգեգործությամբ: Տորենը հիմնականում լինում է աշնանացան, իսկ գարին՝ գարնանացան: Գյուղն ունի 73 տնտեսություն: Համայնքի տարածությունը 6056,31 հեկտար է, բնակելի տարածքը՝ 34 հեկտար: Գյուղում գործում են՝ դպրոց, ակումբ, բուժկետ: Համայնքը սնվում է գազի և էլեկտրական սնուցման կենտրոնական ցանցից: Համայնքն ունի խմելու ջրի 1 ինքնահոս ձջրաղբյուր՝ 8-վրկ. ելքով:

գյուղ Ջեղեա

Գյուղը 1988 թվականի նոյեմբեր ամսից վերաբնակեցվել է Նախիջևանի շրջանի Ազնաբերդ գյուղից արտագաղթած հայերով: Գյուղը գտնվում է մարզկենտրոնից 20 կմ հյուսիս արևելք: Այս գյուղում իրենց հանգրվանն են գտել Նախիջևանից տեղահանված հայերը: Տնտեսությունների թիվը 28:


Քաղաքային բնակչությունը հիմնականում զբաղվում է առևտրով, փոքր և մանր բիզնեսով, իսկ գյուղական բնակչությունն՝ անասնապահությամբ և հողագործությամբ, ինչը ոչ բոլոր դեպքերում է ապահովում բավարար եկամուտներ ապրուստի միջոցները հոգալու համար, նպաստելով համայնքի բնակչության միգրացիայի աճին, հետևաբար համայնքում առաջնային անհրաժեշտություն է աշխատատեղերի ստեղծումը:

Վայք խորոշարցված համայնքն ունի բազմաթիվ կարիքներ, որոնք օրակարգային հարցեր են՝ նորացված գյուղատնտեսական տեխնիկայի ձեռքբերում, փողոցային լուսավորության խնդիրներ, աղբահանություն, ներհամայնքային ճանապարհների բարեկարգում: Գյուղերում չկան երիտասարդական և այլ ժամանացային կենտրոններ:


Համայնքը գտնվում է Վայոց Ձոր մարզի աշխարհագրական կենտրոնում: Այն հանդիսանում է տուրիստական ճամբորդությունների խաչմերուկ՝ համայնքով է անցնում դեպի Ջերմուկ, Սյունիք, Արցախ և Իրանի իսլամանական հանրապետություն տանող ճանապարհները:

Համայնքի առկա (ներառյալ ժամանակավոր ներկա) բնակչության թիվը 2016թ. հունվարի 1-ի տվյալներով կազմում է 8660 մարդ, այդ թվում՝ տղամարդիկ 4490, կանայք 4170, տնտեսությունների թիվը՝ Վայք՝ 1870, Ազատեկ 176, Արին 70, Փոռ 33, Ջեղեա 28:


ԿԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹԻՎԸ



Ստորև ներկայացված են բնակչության տարիքային սանդղակը և բնակչության բնական աճը 2013-2016թթ



Բնակչության բնական աճը




Վայք համայնքի գյուղատնտեսական ցուցանիշները
(աղբյուրը՝ պաշտոնական վիճակագրություն)

	Գյուղ Հողեր /հա	Վարել ահող/ հա	Այգի	Մեղվա ընտանիք	Մանր եղջերա վոր	Խոշոր եղջերավոր
Վայք	105	0	0	2110	257	617
Արին	3468	295	62	374	1379	497
Ագատեկ	6542	785	76	392	597	542
Զեղեա	2744	302	46	83	57	83
Փոռ	1890	194	12	226	150	160
Ընդամենը	14751	1577	198	3185	2440	1899

2.2 Համայնքի սոցիալ-տնտեսական իրավիճակը

Վայք համայնքի ընդհանուր և սեփական եկամուտների
դինամիկան 2014-2016թթ



Համայնքի ընդհանուր տարեկան բյուջեն կազմում է 177454 հազ. դրամ, որից 37454 հազ. դրամը հանդիսանում է համայնքի սեփական եկամուտները: Վայք համայնքի տնտեսությունը բազմազան է, մի կողմում մրցունակ, արտադրողական, արդյունավետ կազմակերպված մի քանի բիզնեսներ են, մյուս կողմում՝ ցածր տնտեսական մրցունակությամբ բազմաթիվ ձեռնարկություններ: Մրցունակ ձեռնարկությունները կենտրոնացած են գինեգործության, չրերի, արտադրության, այգեգործության (տանձ, խնձոր, կեռաս, սալոր), մեղվապահության, բնական թեյերի արտադրության, բնական քարերի մշակման, հիդրոշինարարության ճյուղերում, ռեստորանային և հյուրանոցային սպասարկման մեջ (մոտ 25 ձեռնարկություններ): Վայք համայնքում գործում է 67 հասարակական խանութներ: Ձեռնարկությունների մրցունակությունը ցածր է առևտրի, սննդարդյունաբերության, բնակչության կենցաղային սպասարկման ոլորտներում, ինչպես նաև անասնապահության և հողագործության մեջ: Ընդհանուր առմամբ ԱՊՀ և արևմտյան երկրներ են արտահանվում համայնքում շշալցվող գինիները, հանքային ջրերն ու բնական թեյերը:

Վայքի տնտեսության հեռանկարը ռազմավարական և բարելավվող ճյուղերն են, որտեղ կուտակված է տնտեսական զարգացման պոտենցիալը: Տուրիզմի և այգեգործության զարգացման շուրջ պետք է կառուցվի Վայքի տնտեսության զարգացման առանցքը: Անասնապահությունը թույլ ճյուղերից է, կովերի կաթնատվությունը ցածր է հանրապետության միջին ցուցանիշից, մթերման գները ևս ցածր են և չեն ապահովում շահույթաբերություն: Նույնը վերաբերվում է նաև հացահատիկային կուլտուրաների մշակմանը:

Վերջին երկու տարվա ընթացքում համայնքում կատարվող ներդրումների մեծ մասն ուղղվում է դեպի այգեգործություն և պտուղների վերամշակման ոլորտներ: Այստեղ կիրառվում են ժամանակակից տեխնոլոգիաներ, տնկիների ավելի արտադրողական տեսակներ: Մարզում

տեխնոլոգիական գինվածությամբ առաջատար գինեգործարանը, ծիրանի օղու արտադրամասը, չրեթի արտադրամասը, սառնարանային տնտեսությունները գործում են Վայք համայնքում:

Վայք համայնք ունի շատ գեղատեսիլ հնամյա, բնակավայրեր, հարակից պատմամշակութային հուշարձաններ (գեներալ Պասկևիչի կամուրջը, ս. Տրդատ եկեղեցին,) որոնք կարող են հետաքրքրություն ներկայացնել զբոսաշրջության բնագավառում:

Վայք քաղաքի աշխարհագրական դիրքը բարենպաստ պայմաններ է ստեղծում զբոսաշրջիկներին ժամանակավոր հյուրնկալելու, կացարաններով ապահովվելու համար, քանի որ համայնքով է անցնում դեպի Արցախ և Իրանի հանրապետություն տանող միջպետական մայրուղին: Վայք քաղաքը հանդիսանում է շատ հարմար բնակավայր՝ արագ սննդի կազմակերպման և գիշերակացի հնարավորություն կազմակերպելու համար: Քաղաքում զարգացել է ռեստորանային և հյուրանոցային բիզնեսը:

Համայնքը նաև շատ հնարավորություններ ունի գյուղերում զարգացնելու էկոտուրիզմը:

Համայնքում փոքր ու միջին ձեռնարկատիրության զարգացման հիմնախնդիրներն են՝

- *օտարերկրյա ներդրողների համար ցածր գրավչություն,*
- *նպաստավոր և խրախուսող օրենսդրական դաշտի կատարելագործման կարիք,*
- *թողարկվող արտադրանքի ընդհանուր ծավալում արտահանվող արտադրանքի փոքր ծավալ:*

Արցունակ ձեռնարկատիրական գործունեություն ծավալելու համար համայնքում նպատակահարմար է անցում կատարել ինովացիոն արտադրությանը և ինովացիոն բիզնեսին: Համայնքում հատկապես կարևոր է բարձր որակ ապահովող զբոսաշրջության ինդուստրիայի համալիր զարգացումը, ինովացիոն տեխնոլոգիաներով աշխատող փոքր և միջին ձեռնարկությունների կայացումը:

Նախատեսվում են նաև մասնավոր ընկերություններում մասնակցային ներդրումներ:

Համայնքապետարանի կողմից փոքր ու միջին ձեռնարկատիրության զարգացմանը աջակցելու մեխանիզմները հետևյալն են՝

- *քույր քաղաքների հետ փոխադարձ փորձի փոխանակման և համատեղ բիզնես ծրագրերի իրագործմանն աջակցության ցուցաբերում,*
- *համայնքային տնտեսության բոլոր ոլորտներում ինովացիոն նախաձեռնությունների խրախուսում և աջակցություն,*
- *արտոնյալ պայմաններով տարածքների հատկացում:*

Առողջապահության բնագավառում Վայք համայնք ներկայացված է մեկ հիվանդանոցով(95 մահճակալ) , մեկ պոլիկլինիկայով (94 բուժաշխատող): Փոռ, Ազատեկ, Արին, Ջեդեա համայնքներում գործում են բուժկետեր: Համայնքում գործում են հինգ դպրոցներ, մեկ վարժարան, մանկական արվեստի դպրոց, հինգ գրադարաններ, չորս մշակույթի տներ, 2 մանկապարտեզներ, մեկ մարզադաշտ և մեկ մարզադպրոց, շախմատի ակումբ: Վայքի հիմնական դպրոցը նախատեսած մինչև 500 երեխաների համար, միջնակարգ դպրոցը մինչև 1100 երեխաների համար: Արինի և Ազատեկի հիմնական դպրոցները մինչև 200 աշակերտների համար, Ջեդեա գյուղի դպրոցը մինչև 100 աշակերտների համար: Գյուղական դպրոցները այժմ գործում են թերժանրաբեռնվածությամբ, Վայքի հիմնական դպրոցը գործում է գերժանրաբեռնվածությամբ, աշակերտները սովորում են երեք հերթափոխով:

2.3 Համայնքում իրականացվող ծրագրերը

1. 2014-2018թթ ժամանակահատվածի համար Վայք քաղաքապետարանի և «Հաբիթաթ ֆոր Հյունանիթի Արմենիա» հիմնադրամի միջև կնքվել է համաձայնագիր , որի շրջանակներում նախատեսվում է իրականացնել Վայքի 14 բազմաբնակարանային շենքերի տանիքների վերանորոգում և ջերմամեկուսացում: Ծրագիրը ֆինանսավորվում է Եվրոմիության կողմից, իսկ Վայքի համայնքապետարանը նշված ծրագրին մասնակցում է համաֆինանսավորման եղանակով: Ծրագիրը հնարավորություն կտա բնակչությանը կրճատել էլեկտրոգիայի համար կատարվող ծախսերը:

Քանի որ Վայք քաղաքը 2014թ. –ից անդամակցում է «Քաղաքապետերի դաշնագիր-Արևելք» ծրագրին, ծրագրի շրջանակներում, ստորագրել է համաձայնագիր մինչև 2020թ. մթնոլորտ արտանետվող CO2 գազի ծավալը 20% կրճատելու վերաբերյալ: Վերը նշված միջոցառումը հանդիսանում է Վայքի էներգետիկ կայուն զարգացման ծրագրի մի բաղադրիչը, որի արդյունքում կկրչատվի նաև ածխաթթու գազի արտանետման ծավալները:

2. Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի և Վայքի քաղաքապետարանի կողմից նախատեսվում է իրականացնել խոշորացված համայնքի զարգացման ծրագիր, որը կնպաստի համայնքային ենթակառուցվածքների զարգացմանը:
Այն իր մեջ ներառում է

Մեքենատրակտորային պարկի ստեղծում
Ներհամայնքային և միջհամայնքային ճանապարհների բարեկարգում
Ներհամայնքային ուղևորափոխադրումների կազմակերպում
Չրերի չորացման արտադրամասի ստեղծում

Ծրագիրը հնարավորություն կտա բարելավել միջհամայնքային և հանդամասային ավտոճանապարհները, Արին, Ջեդեա, Ագատեկ և Փոռ գյուղերի բնակչությանը մեքենատրակտորային պարկը կտրամադրի իր միջոցները՝ ժամանակին կազմակերպելու գյուղատնտեսական և այգեգործական աշխատանքները: Չրերի չորացման արտադրամասի ստեղծումը Ագատեկ գյուղում հնարավորություն կտա համայնի բնակչությանը զբաղվել չրերի արտադրությամբ և կապահովի ևս 5-10 նոր աշխատատեղեր:

3. ՄԱԿ –ի զարգացման ծրագրի գրասենյակ և Վայքի համայնքապետարանի համատեղ ջանքերով նախատեսվում է իրականացնել համայնքի արտաքին լուսավորության ծրագիր, որի շրջանակներում , նախատեսվում է Վայք քաղաքում իրականացնել արտաքին լուսավորության համակարգի արդիականացում, էներգախնայող լուսատուների միջոցով:

Զարգացման ծրագրերի շրջանակներում համայնքում նախատեսվում է իրականացնել

1. Ջերմուկի խճուղու արտաքին լուսավորություն լուսավորության աշխատանքներ
2. Վայքի մշակույթի տան վերանորոգում
3. Վայքի քաղաքային այգու բարեկարգում
4. Գյուղտեխնիկայի ձեռքբերում

5. Վայքի խոշորացված համայնում առկա ջրագծերի կապիտալ նորոգում և նոր ոռոգման համկարարգերի կառուցում և շահագործում
6. Նոր գերեզմանոցի տեղանշում, և կառուցապատում
7. Բազմաբնակարանային շենքերի բակային տարածքների ասֆալտապատում
8. Խաղահրապարակների կազմակերպում
9. Արին, Ազատեկ, Փոռ, Ջեդեա գյուղերի փողոցների լուսավորության կազմակերպում
10. Աղբահանության համակարգի բարելավում, այդ թվում նոր աղբատար մեքենաների ձեռքբերում, գյուղական համայնքներում աղբահանության կազմակերպում և աղբավայրերի բարեկարգում:


2.4 Համայնքի ֆինանսական իրավիճակի նկարագրություն և ֆինանսական կանխատեսումներ

Համայնքի բյուջեի եկամուտները գոյանում են համայնքի բյուջե վճարվող հողի հարկից, գույքահարկից, տեղական տուրքերից և ֆինանսական համահարթեցման նպատակով տրվող դոտացիաներից: Համայնքի բյուջեի եկամուտների սեփական եկամուտները փոքր մաս են կազմում, սակայն դրանք 2013-2015թթ. փաստացի տվյալներով աճել են:


Ստորև ներկայացված է համայնքի սեփական եկամուտների փաստացի տվյալները 2014-2016թթ.:

ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԴԻՆԱՄԻԿԱՆ

2013-2015թթ



2016 թվականի համայնքի սեփական եկամուտները նախատեսվել են 35,208 հազար դրամ, 2017 թվականի բյուջեի նախագծով նախատեսվել է 43,000 հազար դրամ:



2016 թվականին նախատեսված ընդհանուր եկամուտների չափը կազմում է 35,208 հազար դրամ, 01.11.2016թ. դրությամբ համայնքի բյուջեի եկամուտները կատարվել են 30,000 հազար դրամ: 2017 թվականի տարեկան բյուջեի նախագծով նախատեսվել է ընդհանուր եկամուտներ՝ 43,000 հազար դրամ:

Առաջիկա տարիներին ակնկալվում է պետության կողմից տրամադրվող ֆինանսական համահարթեցման նպատակով տրվող դոտացիաների չափի ավելացում, ինչպես նաև նախատեսվում է ավելացնել համայնքի բյուջե մտնող սեփական եկամուտների չափաբաժինը, ի հաշիվ համայնքների խոշորացման, տեղական տուրքերի և վճարների: Առաջիկա տարիներին նախատեսված համայնքային ծրագրերի իրականացման գործում նախատեսվում է ներգրավել պետական և դոնոր կազմակերպությունների աջակցությունը:

2.5 Զարգացման խոչընդոտներ և դժվարություններ

1) գործարար միջավայրի բարելավումը և ձեռնարկատիրության խթանումը,

Համայնքի գործարար միջավայրի բարելավման և ձեռնարկատիրության խթանման զարգացման խոչընդոտները, պատճառները բազմազան են՝ սկսած մրցունակ ծառայությունների, աշխատանքների, ապրանքների արտադրությունից մինչև նրանց իրացում: Գյուղական բնակավայրերում արտադրված գյուղմթերքները իրացվում են շուկայականից անհամեմատ ցածր գներով: Այստեղ գերակշռում են շահութաբերության ցածր մակարդակով աչքի ընկնող գյուղմթերքների արտադրությունը, գյուղացիները դժկամությամբ են հրաժարվում ավանդական մշակություններից անցում կատարել դեպի ավելի մրցունակ (օրինակ հացահատիկային կուլտուրաների, կաթնամթերքի, մսամթերքի արդադրությունից՝ ավելի շահութաբեր՝ այգեգործություն, կամ ասենք ավելի պահանջարկ ունեցող և մրցունակ մշակաբույսերի մշակություն): Գյուղատնտեսության արդյունաբերականացումը և արտադրություն-վերամշակում-շուկա շղթայի լիարժեք գործարկման բացակայությունը հնարավորություն չի տալիս այդ ոլորտում ապահովել զբաղվողների եկամուտների աճ: Համայնքի գործարար հնարավորությունների <<քարոզչության>> բացակայությունը, չի նպաստում օտարերկրյա ընկերությունների կամ սփյուռքահայության կողմից համայնքում ներդրումներ անելու գրավչությանը:

2) նախադպրոցական կրթության և արտադպրոցական դաստիարակության կազմակերպումը,

3) 2014թ- համայնքում նկատվում է մանկապարտեզների շենքային պայմանների բարելավման խնդիրներ, մանկապարտեզներ հաճախող երեխաների քանակի մեծացման հետ զուգընթաց: Համայնքի ֆինանսական հնարավորությունների դեպքում երկու համայնքային մանկապարտեզներին անհրաժեշտ է կառուցել լրացուցիչ մասնաշենքեր:

4) ակտիվ մշակութային և մարզական կյանքի կազմակերպումը՝ երիտասարդության ներգրավմամբ,

Համայնքում գործում է 2 մարզական կառույց՝ մարզադաշտ և մարզադպրոց: Սակայն շատ մանկածնեքում բացակայում է մարզչական կազմը /բոքս, ըմբշամարտ, բասկետբոլ և այլն/:

5) համայնքի բնակչության սոցիալական պաշտպանությունը,

Համայնքում առկա է գործազրկության բարձր մակարդակ: Դիտվում նաև վերջին 3 տարիներին արտաքին տրանսֆերտների կտրուկ նվազում: Գործարար ակտիվության մակարդակը ցածր է (տնտեսական մրցակցություն, մրցունակ արտադրանք, տնտեսաաշխարհագրական դիրք և այլն):

Այս հիմնական գործոններով է պայմանավորված բնակչության սոցիալական պաշտպանվածության ցածր մակարդակը:

6) համայնքի բնակավայրերի կառուցապատումը, բարեկարգումը և կանաչապատումը, համայնքի աղբահանությունը և սանիտարական մաքրումը, կոմունալ տնտեսության աշխատանքների ապահովումը, ինչպես նաև համայնքային գերեզմանատների պահպանումը և գործունեության ապահովումը:

Խոշորացված համայնքի զարգացման համար լուրջ խոչընդոտ է համայնքի բնակավայրերի բարեկարգումը, կանաչապատումը, սանիտարական մաքրումը և աղբահանության կազմակերպումը: Ֆինանսական սուղ միջոցների պատճառով համայնքը չի կարողանում ձեռք բերել աղբատար մեքենաներ, իրականացնել կանաչապատում և սանիտարական մաքրում խոշորացված համայնքի տարածքում:

Վայք համայնքին անհրաժեշտ է նաև նոր գերեզմանոցի տարածք և դրա կառուցապատում:

7) համայնքի հասարակական տրանսպորտի աշխատանքի կազմակերպումը, համայնքային ճանապարհային ենթակառուցվածքների պահպանումը և շահագործումը:

Խոշորացվախ համայնքում իսպառ բացակայում են ներհամայնքային և միջհամայնքային ուղևորափոխադրումները, որի հիմնական պատճառն այն է, որ մասնավոր ընկերությունների համար նշված ծառայությունների մատուցումը շահութաբեր չէ:

Կարևոր խնդիր է նաև ճանապարհների բարեկարգման համար անհրաժեշտ ճանապարհային տեխնիկայի ձեռքբերումը, ինչը կախված է համայնքի բյուջեի սուղ հնարավորություններից:

8) գյուղական բնակավայր ընդգրկող համայնքներում գյուղատնտեսության զարգացման խթանումը:

Գյուղական բնակավայրերում պետք է օգնություն ցուցաբերել անցնելու առավել մրցունակ գյուղմթերքների արտադրության: Գյուղմթերքների արտադրության մեջ դեռևս ներդրված չէ, միջազգային չափանիշներին բավարարող պայմաններ, ինչը հնարավորություն կտա բարելավել արտադրանքի որակն ու արտաքին տեսքը, բարձրացնել մրցունակությունը:

9) համայնքում շրջակա միջավայրի պաշտպանությունը,

Աղբատար մեքենաների բացակայության պատճառով աղբահանության և սանմաքրման աշխատանքները պատշաճ որակով չեն իրականացվում խոշորացված համայնքի ողջ տարածքում /ներառյալ գյուղերում/: Համայնքում չկա էներգախնայողության մշակույթի բավարար մակարդակ, անհարժեշտ գիտելիքներ ու փորձ շրջակա միջավայրի պաշտպանության արդյունավետ իրականացման համար:

10) զբոսաշրջային հեռանկարներ ունեցող համայնքներում զբոսաշրջության զարգացման ցածր մակարդակ:

Համայնքն ունի զբոսաշրջության զարգացման հսկայական ներուժ (նպաստավոր աշխարհագրական դիրք, բարենպաստ կլիմա, հյուրանոցառեստորանային կայացած ենթակառուցվածքներ, գտնվում միջպետական և տուրիստական ուղիների խաչմերուկներում): Այս ամենով հանդերձ համայնքի սբոսաշրջային ներուժը բավարար լուսաբանված չէ տարբեր տեղեկատվական աղբյուրներում, այդ թվում էլ Էլեկտրոնային միջոցներով:

11) համայնքային հասարակական կյանքին հաշմանդամների մասնակցության խթանումը,

Համայնքի հասարական կյանքին հաշմանդամների ակտիվ մասնակցություն ապահովելու համար բացակայում է համայնքի հասարակական կյանքն ապահովող կազմակերպությունների հաշմանդամների համագործակցությունը, ցածր է իրազեկվածության մակարդակը, համայնքում զգացվում է սոցիալական աշխատողների պահանջ: Անհրաժեշտ է ահապովել համայնք-սոցիալական աշատող-հաշմանդամ շղթային կենսունակությունը:

12) համայնքի երիտասարդության խնդիրների լուծմանն ուղղված ծրագրերի և միջոցառումների կազմակերպում,

Համայնքն ունի մտավոր մեծ ներուժը, սակայն համայնքում առկա է երիտասարդների գործազրկության բարձր մակարդակ, որի արդյունքում նրանց մեծ մասը արտագնա աշխատանքի են մեկնում մայրաքաղաք կամ արտերկիր, աշխատատեղերի բացակայության պատճառով:

13) բարեգործության խթանումը՝ համայնքում մշակութային, կրթական, գիտական, առողջապահական, մարզական, սոցիալական և այլ հաստատությունների հիմնադրման, ֆինանսավորման, ինչպես նաև դրանց ֆինանսական անկախության ապահովման նպատակով:

2.6 Համայնքի ուժեղ և թույլ կողմերի, հնարավորությունների և սպառնալիքների (ՈւՅՀՍ) վերլուծություն

Ուժեղ	Թույլ
<i>Բնական մրցակցային առավելություններ</i>	<ul style="list-style-type: none"> • Քաղաքի բրենդավորման բացակայություն • Արտագաղթի բարձր մակարդակ • Հեղեղատարների և ջրահեռացման համակարգերի վատ վիճակ • Սակավ կանաչապատ տարածքներ • Համայնային ենթակառուցվածքի կառույցների վերանորոգման և գույքի թարմացման անհրաժեշտություն • Գործազրկության բարձր մակարդակ • Աղքատության բարձր շեմ • Բնակչության ցածր կենսամակարդակ • Միջհամայնքային և ներհամայնքային տրանսպորտի բացակայություն • Ժամանցի սահմանափակ հնարավորություն • Ֆինանսական այլընտրանքային միջոցների բացակայություն
<ul style="list-style-type: none"> • Ջրային ռեսուրսների առկայություն • Ոսկու, բազալտի, արձիճի հանքավայրեր • Առողջարանային Ջերմուկ քաղաքին հարևանություն • Մաքուր բնություն • Մեղմ, տաք կլիմա • Արևային օրերի ռեկորդային քանակ • Միջպետական մայրուղին, հետագայում, Հյուսիս-Հարավ ավտոմայրուղին անցնում է համայնքի միջով • Բնական և պատմական բազմաթիվ հուշարձաններ • Գյուղատնտեսական նշանակության մեծաքանակ հողերի առկայություն • Ինքնահոս ոռոգում • Բազմազան բույսերի և դեղաբույսերի առկայություն 	
<i>Մասնագիտական, մարդկային մրցակցային առավելություններ</i>	

<ul style="list-style-type: none"> • Տուրիզմի զարգացման մասնագետներ • Տեխնոլոգներ • Ինժեներներ, երկրաբաններ • Գործարար ունակություններով մարդկանց մեծ տեսակարար կշիռ • Մեղվաբուծության բարձրորակ մասնագետներ • Բարձրագույն կրթություն ունեցող մարդկանց մեծ տեսակարար կշիռ 	
<i>Տեխնոլոգիական մրցակցային առավելություններ</i>	
<ul style="list-style-type: none"> • Տնական օդու, գինու, դոշաբի ավանդական տեխնոլոգիաներ • Մառնարանային տնտեսություններ • Գինեգործության ժամանակակից տեխնոլոգիաներ • Այգեգործության ժամանակակից տեխնոլոգիաներ • Մրգի վերամշակման (չիր, օղի) մրցունակ տեխնոլոգիաներ 	
ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ	ՄՊԱՌԱՆԻՔ
<ul style="list-style-type: none"> • Վայք քաղաքը իր աշխարհագրական դիրքով գտնվում է մարզի կենտրոնում • Համայնքի միջով է անցնում միջպետական մայրուղին • համագործակցություն • Տարբեր միջազգային կառույցների, հիմնադրամների և բարեգործական կազմակերպությունների հետ համագործակցություն 	<ul style="list-style-type: none"> • Գործազրկության բարձր մակարդակ • Սոցիալապես անապահով ընտանիքների մեծ թիվ • Ներդրումների անբավարար մակարդակ • Շրջակա միջավայրի նկատմամբ անտարբերություն • Բնակչության արտագաղթի մեծ տոկոս • Ուղեղների արտահոսք • Ֆինանսական այլընտրանքային միջոցների ռեսուրսների բացակայություն

ք. Վայք

Ուժեղ	Թույլ
--------------	--------------

<ul style="list-style-type: none"> • Ջրային ռեսուրսների առկայություն • Առողջարանային Ջերմուկ քաղաքին հարևանություն • Մաքուր բնություն • Մեղմ, տաք կլիմա • Արևային օրերի ռեկորդային քանակ • Միջպետական մայրուղին, հետագայում, Հյուսիս-Հարավ ավտոմայրուղին անցնում է համայնքի միջով • Ինքնահոս ոռոգում • Տուրիզմի զարգացման մասնագետներ • Տեխնոլոգներ • Ինժեներներ, երկրաբաններ • Գործարար ունակություններով մարդկանց մեծ տեսակարար կշիռ • Բարձրագույն կրթություն ունեցող մարդկանց մեծ տեսակարար կշիռ 	<ul style="list-style-type: none"> • Քաղաքի բրենդավորման բացակայություն • Արտագաղթի բարձր մակարդակ • Հեղեղատարների և ջրահեռացման համակարգերի վատ վիճակ • Համայնային ենթակայության կառույցների վերանորոգման և գույքի թարմացման անհրաժեշտություն • Գործազրկության բարձր մակարդակ • Աղքատության բարձր շեմ • Բնակչության ցածր կենսամակարդակ • Միջհամայնքային և ներհամայնքային տրանսպորտի բացակայություն • Ժամանցի սահմանափակ հնարավորություն • Ֆինանսական այլընտրանքային միջոցների բացակայություն
ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ	ՄՊԱՌՆԱԼԻՔ
<ul style="list-style-type: none"> • Վայք քաղաքը իր աշխարհագրական դիրքով գտնվում է մարզի կենտրոնում • Համայնքի միջով է անցնում միջպետական մայրուղին 	<ul style="list-style-type: none"> • Գործազրկության բարձր մակարդակ • Սոցիալապես անապահով ընտանիքների մեծ թիվ • Ներդրումների անբավարար մակարդակ • Բնակչության արտագաղթի մեծ տոկոս • Ուղեղների արտահոսք

գ. Փոռ

Ուժեղ	Թույլ
<ul style="list-style-type: none"> • Գյուղ նշանակության հողերի առկայություն • Ջրային ռեսուրսների առկայություն • Մեղվաբուծության բարձրորակ մասնագետներ 	<ul style="list-style-type: none"> • Համայնային ենթակայության կառույցների վերանորոգման և գույքի թարմացման անհրաժեշտություն • Աղբահանության և սանիտարամաքրման բացակայություն • Գյուղատնտեսական ժամանակակից տեխնիկայի պակաս
ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ	ՄՊԱՌՆԱԼԻՔ
<ul style="list-style-type: none"> • Այգեգործության համար նպաստավոր պայմաններ 	<ul style="list-style-type: none"> • Գործազրկության բարձր մակարդակ • Ներդրումների անբավարար մակարդակ • Բնակչության արտագաղթի մեծ տոկոս

գ. Ազատեկ

Ուժեղ	Թույլ
<ul style="list-style-type: none"> • Գյուղ նշանակության հողերի առկայություն • Զրային ռեսուրսների առկայություն • Մեղվաբուծության բարձրորակ մասնագետներ • Սառնարանային տնտեսություն • Չրերի արտադրություն • Ոսկու, բազալտի, արճիճի հանքավայրեր 	<ul style="list-style-type: none"> • Համայնային ենթակայության կառույցների վերանորոգման և գույքի թարմացման անհրաժեշտություն • Աղբահանություն • Գյուղատնտեսական ժամանակակից տեխնիկայի պակաս
ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ	ՄՊԱՌՆԱԼԻՔ
<ul style="list-style-type: none"> • Այգեգործության համար նպաստավոր պայմաններ • Մեղվաբուծություն 	<ul style="list-style-type: none"> • Գործազրկության բարձր մակարդակ • Ներդրումների անբավարար մակարդակ • Բնակչության արտագաղթի մեծ տոկոս

գ . Արին

Ուժեղ	Թույլ
<ul style="list-style-type: none"> • Գյուղ նշանակության հողերի առկայություն • Զրային ռեսուրսների առկայություն • Չրերի արտադրություն • Պտղատու մեծաքանակ այգիներ 	<ul style="list-style-type: none"> • Համայնային ենթակայության կառույցների վերանորոգման և գույքի թարմացման անհրաժեշտություն • Աղբահանություն • Գյուղատնտեսական ժամանակակից տեխնիկայի պակաս
ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ	ՄՊԱՌՆԱԼԻՔ
<ul style="list-style-type: none"> • Այգեգործության համար նպաստավոր պայմաններ • Մեղվաբուծություն 	<ul style="list-style-type: none"> • Գործազրկության բարձր մակարդակ • Ներդրումների անբավարար մակարդակ • Բնակչության արտագաղթի մեծ տոկոս

գ. Զեդեա

Ուժեղ	Թույլ

<ul style="list-style-type: none"> • Գյուղ նշանակության հողերի առկայություն • Զարգացած այգեգործություն • Ջրային ռեսուրսների առկայություն • Մեղվաբուծության բարձրորակ մասնագետներ • Կաթի սառնարանային տնտեսություն • Ջերմոցային տնտեսություն • Չրերի արտադրություն 	<ul style="list-style-type: none"> • Համայնային ենթակայության կառույցների վերանորոգման և գույքի թարմացման անհրաժեշտություն • Աղբահանություն • Գյուղատնտեսական ժամանակակից տեխնիկայի պակաս
ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ	ՄՊԱՌՆԱԼԻՔ
<ul style="list-style-type: none"> • Այգեգործության համար նպաստավոր պայմաններ • Մեղվաբուծություն 	<ul style="list-style-type: none"> • Գործազրկության բարձր մակարդակ • Ներդրումների անբավարար մակարդակ • Բնակչության արտագաղթի մեծ տոկոս

5. ՀԱՄԱՅՆՔԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄ

Աղյուսակ 2. Համայնքի 2016-2020թթ. բյուջեների մուտքերի ցուցանիշները և 2016-2018թթ. բյուջեների մուտքերի կանխատեսումը

հազար դրամ

Ք/հ	Մուտքերի անվանումը	2016թ. փաստ.	2017թ. Նախ.	2018թ. Կանխ.	2019թ. յանխ.	2020թ. կանխ.
1	2	3	4	5	6	7
	ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՄՈՒՏՔԵՐ՝ ԸՆԴԱՄԵՆԸ (I+II+III)*	181567.7	181895.3	184845.4	195000.0	196600.0
I.	ԸՆԴԱՄԵՆԸ ԵՎ ՄՈՒՏՔՆԵՐ (1+2+3)*	179872.7	172895.3	174845.4	178000.0	179600.0
1.	ՀԱՐԿԵՐ ԵՎ ՏՈՒՐՔԵՐ	34110.0	35380.0	36400.0	37500.0	
1.1	Գույքային հարկեր անշարժ գույքից	2100.0	2500.0	2500.0	2500.0	2500.0
	Գույքահարկ շենքերի և շինությունների համար	2100.0	2500.0	2500.0	2500.0	2500.0
	Հողի հարկ	4200.0	5000.0	5000.0	5000.0	5000.0
1.2	Գույքային հարկեր այլ գույքից	23000.0	22000.0	23000.0	24000.0	25000.0
	Գույքահարկ փոխադրամիջոցների համար	23000.0	22000.0	23000.0	24000.0	25000.0
1.3	Ապրանքների օգտագործման կամ գործունեության իրականացման թույլտվության վճարներ	3580.0	3880.0	3900.0	4000.0	4100.0
	Տեղական տուրքեր	3580.0	3880.0	3900.0	4000.0	4100.0
1.4	Ապրանքների մատակարարումից և ծառայությունների մատուցումից այլ պարտադիր վճարներ	1230.0	2000.0	2000.0	2000.0	2000.0
	Պետական տուրքեր	1230.0	2000.0	2000.0	2000.0	2000.0
1.5	Այլ հարկային եկամուտներ					
	Այլ հարկերից և պարտադիր վճարներից կատարվող մասհանումներ					
	Հողի հարկի և գույքահարկի գծով համայնքի բյուջե վճարումների բնագավառում բացահայտված հարկային օրենսդրության խախտումների համար հարկատուներից գանձվող տույժեր և տուգանքներ, որոնք չեն հաշվարկվում այդ հարկերի գումարների նկատմամբ					
2.	ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԴՐԱՄԱՇՆՈՐՅՆԵՐ	135442.7	126454.3	126454.3	127500.0	128000.0
2.1	Ընթացիկ արտաքին պաշտոնական դրամաշնորհներ					
2.2	Կապիտալ արտաքին պաշտոնական դրամաշնորհներ					
2.3	Ընթացիկ ներքին պաշտոնական դրամաշնորհներ					
ա)	Պետական բյուջեից ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիաներ	119465.6	126454.3			
բ)	Պետական բյուջեից տրամադրվող այլ դոտացիաներ	15439.6				
գ)	Պետական բյուջեից տրամադրվող նպատակային հատկացումներ					

	(սուբվենցիաներ)					
դ)	ՀՀ այլ համայնքների բյուջեներից ընթացիկ ծախսերի ֆինանսավորման նպատակով ստացվող պաշտոնական դրամաշնորհներ					
2.4	Կապիտալ ներքին պաշտոնական դրամաշնորհներ					
ա)	Պետական բյուջեից կապիտալ ծախսերի ֆինանսավորման նպատակային հատկացումներ (սուբվենցիաներ)					
բ)	ՀՀ այլ համայնքներից կապիտալ ծախսերի ֆինանսավորման նպատակով ստացվող պաշտոնական դրամաշնորհներ					
3.	ԱՅԼ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ*	10320.0	11061.0	11961.1	13000.0	13000.0
3.1	Տոկոսներ					
3.2	Շահաբաժիններ					
3.3	Գույքի վարձակալությունից եկամուտներ	4053.0	4100.0	5000.0	6000.0	6000.0
	Համայնքի սեփականություն համարվող հողերի վարձակալության վարձավճարներ	2705.0	3000.0	3000.0	3000.0	3000.0
	Համայնքի վարչական տարածքում գտնվող պետական սեփականություն համարվող հողերի վարձակալության վարձավճարներ					
	Համայնքի վարչական տարածքում գտնվող պետության և համայնքի սեփականությանը պատկանող հողամասերի կառուցապատման իրավունքի դիմաց գանձվող վարձավճարներ					
	Այլ գույքի վարձակալությունից մուտքեր	1348.0	1100.0	2000.0	3000.0	3000.0
3.4	Համայնքի բյուջեի եկամուտներ ապրանքների մատակարարումից և ծառայությունների մատուցումից, այդ թվում	5361.1	5361.1	5361.1	5400.0	5400.0
	Պետության կողմից ՏԻՄ-երին պատվիրակված լիազորությունների իրականացման ծախսերի ֆինանսավորման համար պետական բյուջեից ստացվող միջոցներ	5361.1	5361.1	5361.0	5400.0	5400.0
3.5	Վարչական գանձումներ	286.0	1500.0	1500.0	1500.0	1500.0
	Տեղական վճարներ	286.0	1500.0	1500.0	1500.0	1500.0
	Համայնքի վարչական տարածքում ինքնակամ կառուցված շենքերի, շինությունների օրինականացման համար վճարներ					
	Օրենքով սահմանված դեպքերում համայնքային հիմնարկների կողմից առանց տեղական տուրքի գանձման մատուցվող ծառայությունների կամ կատարվող գործողությունների դիմաց ստացվող (գանձվող) վճարներ					
3.6	Մուտքեր տույժերից, տուգանքներից					
	Վարչական իրավախախտումների համար ՏԻՄ-երի կողմից					

	պատասխանատվության միջոցների կիրառումից եկամուտներ					
	Մուտքեր համայնքի բյուջեի նկատմամբ ստանձնած պայմանագրային պարտավորությունների չկատարման դիմաց գանձվող տույժերից					
3.7	Ընթացիկ ոչ պաշտոնական դրամաշնորհներ	537.0				
3.8	Կապիտալ ոչ պաշտոնական դրամաշնորհներ					
3.9	Այլ եկամուտներ*					
	Համայնքի գույքին պատճառած վնասների փոխհատուցումից մուտքեր					
	Վարչական բյուջեի պահուստային ֆոնդից ֆոնդային բյուջե կատարվող հատկացումներից մուտքեր					
	Օրենքով և իրավական այլ ակտերով սահմանված՝ համայնքի բյուջեի մուտքագրման ենթակա այլ եկամուտներ	83.0	100.0	100.0	100.0	100.0
II.	ՈՉ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԻՐԱՑՈՒՄԻՑ ՍՈՒՏՔԵՐ (1+2+3+4)	1695.0	2000.0	2000.0	7000.0	7000.0
1.	Հիմնական միջոցների իրացումից մուտքեր	1695.0	2000.0	2000.0	7000.0	7000.0
	Անշարժ գույքի իրացումից մուտքեր	954.0	1000.0	1000.0	4000.0	4000.0
	Շարժական գույքի իրացումից մուտքեր	741.0	1000.0	1000.0	3000.0	3000.0
	Այլ հիմնական միջոցների իրացումից մուտքեր					
2.	Պաշարների իրացումից մուտքեր					
3.	Բարձրարժեք ակտիվների իրացումից մուտքեր					
4.	Չարտադրված ակտիվների իրացումից մուտքեր					
	Հողի իրացումից մուտքեր					
	Ոչ նյութական չարտադրված ակտիվների իրացումից մուտքեր					
III.	ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ՀԱՎԵՆՈՒՐԴԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՄ ՊԱԿԱՍՈՒՐԴԻ (ՂԵՖԻՑԻՏԻ) ՖԻՆԱՆՍԱԿՈՐՄԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ (Ա+Բ)					
Ա.	ՆԵՐՔԻՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ (1+2)					
1.	ՓՈՒՍԱՌՈՒ ՄԻՋՈՑՆԵՐ					
1.1	Արժեթղթեր					
	-թողարկումից և տեղաբաշխումից մուտքեր					
	-հիմնական գումարի մարում					
1.2	Վարկեր					
	-վարկերի ստացում					
	-ստացված վարկերի հիմնական գումարի մարում					
1.3	Փոխատվություններ					
	-բյուջետային փոխատվությունների ստացում					
	-ստացված փոխատվությունների գումարի մարում					
2.	ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐ	4908.0	7000.0	8000.0	10000.0	10000.0
2.1	Բաժնետոմսեր և կապիտալում այլ					

	մասնակցություն					
	-համայնքային սեփականության բաժնետոմսերի և կապիտալում համայնքի մասնակցության իրացումից մուտքեր					
	-իրավաբանական անձանց կանոնադրական կապիտալում պետական մասնակցության, պետական սեփականություն հանդիսացող անշարժ գույքի (բացառությամբ հողերի), այդ թվում՝ անավարտ շինարարության օբյեկտների մասնավորեցումից առաջացած միջոցներից համայնքի բյուջե մասհանումից մուտքեր					
	-բաժնետոմսեր և կապիտալում այլ մասնակցություն ձեռքբերում					
2.2	Փոխատվություններ					
	-նախկինում տրամադրված փոխատվությունների դիմաց ստացվող մարումներից մուտքեր					
	-փոխատվությունների տրամադրում					
2.3	Համայնքի բյուջեի միջոցների տարեսկզբի ազատ մնացորդը	4908.0	7000.0	8000.0	10000.0	10000.0
2.4	Համայնքի բյուջեի ֆոնդային մասի ժամանակավոր ազատ միջոցների տրամադրում վարչական մաս					
2.5	Համայնքի բյուջեի ֆոնդային մասի ժամանակավոր ազատ միջոցներից վարչական մաս տրամադրված միջոցների վերադարձ ֆոնդային մաս					
2.6	Համայնքի բյուջեի հաշվում միջոցների մնացորդները հաշվետու ժամանակահատվածում					
	որից՝ ծախսերի ֆինանսավորմանը չուղղված համայնքի բյուջեի միջոցների տարեսկզբի ազատ մնացորդի գումարը					
Բ.	ԱՐՏԱՔԻՆ ԱՂՅՈՒՐՆԵՐ					
1.	ՓՈՒՆԱՌՈՒ ՄԻՋՈՑՆԵՐ					
1.1	Արժեթղթեր					
	-թողարկումից և տեղաբաշխումից մուտքեր					
	-հիմնական գումարի մարում					
1.2	Վարկեր					
	-վարկերի ստացում					
	-ստացված վարկերի հիմնական գումարի մարում					
1.3	Փոխատվություններ					
	-փոխատվությունների ստացում					
	-ստացված փոխատվությունների գումարի մարում					

*) Վարչական բյուջեի պահուստային ֆոնդից ֆոնդային բյուջե հատկացվող գումարը չի մտնում բյուջետային ընդհանուր եկամուտների մեջ

6. ՀԱՄԱՅՆՔԻ ՈԼՈՐՏԱՅԻՆ ԿԱՊԻՏԱԼ ԾՐԱԳՐԵՐԻ ՁԵՎԱԿԵՐՊՈՒՄ ԵՎ ԱՄՓՈՓՈՒՄ

Աղյուսակ 3. Կապիտալ ծրագրերի գնահատման չափանիշների ցանկ

1.	Հանրության աջակցություն 37
2.	Ուղղակի և անուղղակի շահառուների թիվ 49
3.	Տնտեսական զարգացում, աշխատատեղերի ստեղծում
4.	Հարատևություն (կենսունակություն)
5.	Ազդեցություն անապահով խավերի վրա, աղքատության նվազեցում 36
6.	Ազդեցություն բնական շրջակա միջավայրի վրա 45
7.	Հիմնական միջոցների պահպանում
8.	Համայնքի կարողությունների հզորացում 55
9.	Ֆինանսական ազդեցությունը համայնքի հետագա տարիների բյուջեների վրա 19

Քառանյա ծրագրում ընդգրկելու համար առաջարկվող կապիտալ ծրագրերի ցանկ

Գ/հ	Ծրագրի անվանումը	Ծրագրի նախնական մոտավոր արժեքը /հազ դրամ/
1	Վայքի «Արևիկ» մարզադաշտի և վարչական շենքի վերանորոգում	64 000.0
2	Վայքի մշակույթի տան վերանորոգում	120 000
3	Թվով 18 բազմաբնակարան շենքերի տանիքների վերանորոգում, նուտքերի պատուհանների փոխում, բակային հատվածների լուսավորում	311 000
4	Ներհամայնքային փողոցների և բազմաբնակարան շենքերի հարակից տարածքների փոսային ասֆալտապատում	30 000
5	Վայք քաղաքի Ջերմուկի խճ. արտաքին լուսավորություն	12 000
6	Երիտասարդական պուրակի և Շահունյան 102 բազմաբնակարան շենիք հարակից տարածքում գտնվող պուրակի վերանորոգում	65 000
	Ընդամենը	602000

3. ՀԱՄԱՅՆՔԻ ՋԱՐԳԱՑՄԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՈՒՄ ԵՎ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԼԱՆԱԿՈՐՈՒՄ

3.1 Համայնքի զարգացման տեսլական

Համայնքի զարգացման ռազմավարությունն է բարեփոխումներ անցկացնելու ճանապարհով հետևողականորեն բարելավել համայնքի բնակչության սոցիալ տնտեսական, մշակութային և հանգստի պայմանները, համայնքը դարձնել տարածաշրջանային զբոսաշրջության կենտրոն, մաքուր, բարեկարգ և գրավիչ բնակավայր: Համայնքի տեսլականն է ունենալ զարգացած զբոսաշրջությամբ, գյուղատնտեսությամբ, փոքր բիզնեսներով համայնք, որտեղ բնակիչներ կունենան զբաղավաճություն, երիտասարդները կվերադառնան և կմնան համայնքում: Դրան է ուղղված համայնքի կողմից կազմված առաջնահերթ ծրագրերի, նպատակների ձևակերպումը ըստ առաջնահերթ բնագավառների, որը ներկայացված է հաջորդ բաժնում:

3.2 Համայնքի զարգացման ծրագրերի, նպատակների առաջադրում և կոնկրետ խնդիրների ձևակերպում

Ստորև ներկայացվում է համայնքի զարգացման ծրագրերի, նպատակների առաջադրում և կոնկրետ խնդիրների ձևակերպում՝ ըստ առանձին բնագավառների.

ԾՐԱԳԻՐ 1

ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՆՈՐ ԱՇԽԱՏԱՏԵՂԵՐԻ ՍՏԵՂԾՈՒՄ:

Համայնքում կարևոր նշանակություն ունի նոր աշխատատեղերի ստեղծումը:

Նախատեսվում Ազատեկ գյուղում վերանորոգել մշակույթի շենքը մի հատվածը և ստեղծել ժամանակակից արևային պանելներով չորանոցներ, այնտեղ կազմակերպել չրերի արտադրություն: Այս ծրագրի իրականացումը հնարավորություն կտա ոչ միայն Ազատեկ գյուղի բնակիչների, այլ նաև հարևան համայնքների (գյուղերի) համար կազմակերպել չրերի արտադրություն: Նախատեսվում է այս ծրագրով ապահովել 7-8 աշխատատեղեր:

Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ է 42 մլն ՀՀ դրամ, որն ակնկալվում է ստանալ Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի ծրագրի շրջանակներում: Այժմ տարվում են աշխատանքներ այդ ուղղությամբ: Ծրագիրը նախատեսվում է իրականացնել 2017 թվականի ընթացքում:

ԾՐԱԳԻՐ 2

ՆԵՐՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ

ՈՒՂԵՎՈՐԱՓՈՒՆԱԴՐՈՒՄՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ

Համայնքի համար կարևորագույն խնդիր է ներհամայնքային ուղևորափոխադրումների կազմակերպումը: Ուղևորափոխադրումների բացակայությունը համայնքի տարածքում լուրջ խոչընդոտ է հանդիսանում թե՛ բնակիչների տեղաշարժի և թե՛ ազգաբնակչության տնտեսական զարգացման համար: Բնակիչները տեղաշարժվելու համար օգտագործում են անհամեմատ թանկ տրանսպորտային միջոցներ, որի հնարավորությունը ոչ բոլորն ունեն: Ծրագիրը իրականացնելու համար անհրաժեշտ է ձեռք բերել ուղևորատար երեք միկրոավտոբուսներ:

Ծրագիրը նախատեսվում է իրականացնել 2017 թվականին՝ Հայաստանի տարածքների զարգացման հիմնադրամի օգնությամբ , որի համար անհրաժեշտ է շուրջ 37 մլն դրամ:

ԾՐԱԳԻՐ 3

ՀԱՄԱՅՆՔԻ ՓՈՂՈՑՆԵՐԻ ԼՈՒՍԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ:

Համայնքի համար կարևոր է փողոցային լուսավորությունը: Փողոցային լույսեր են անցկացվել համայնքի գլխավոր փողոցում, սակայն այն ամբողջությամբ չի ավարտվել: 2017-2019 թվականին նախատեսվում է իրականացնել համայնքի Վայք քաղաքի, Ազատեկ, Փոռ, Արին, Ջեդեա բնակավայրերի լուսավորությունը: ՄԱԿ –ի զարգացման ծրագրի գրասենյակի և Վայքի համայնքապետարանի համատեղ ջանքերով նախատեսվում է իրականացնել համայնքի արտաքին լուսավորության ծրագիր, որի շրջանակներում , նախատեսվում է Վայք քաղաքում իրականացնել արտաքին լուսավորության համակարգի արդիականացում, էներգախնայող լուսատուների միջոցով: Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ է 10 մլն ՀՀ դրամ, որը նախատեսվում է

իրականացնել համաներդրմամբ: Համայնքի սեփական ներդրումը կկազմի 2 մլն դրամ, մնացած 8 մլնն ակնկալվում է ստանալ ՄԱԿ-ի զարգացման հիմնադրամից:

ԾՐԱԳԻՐ 4

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԵՔԵՆԱՏՐԱԿՏՈՐԱՅԻՆ ՊԱՐՏՔԻ ՍՏԵՂԾՈՒՄ:

Գյուղատնտեսական աշխատանքերը ժամանակին և արդյունավետ կազմակերպելու համար , համայնք նպատակ ունի ստեղծելու մեքենատրակտորային պարկ՝ Խոտհնձիչներ, մոտոբլոկներ, սրսկիչ մեքենաներ, տրակտորներ: Գյուղատնտեսական մեքենատրակտորային պարկը համալրված կլինի նաև ճանապարհների բարեկարգման համա անհրաժեշտ մեքենաներով՝ գրեյդեր, բեռնատար, ավտոկռունկ: Հանդամիջյան ճանապարհների անբարեկարգ վիճակը խոչընդոտ է գյուղացիների գյուղատնտեսական աշխատանքների կատարմանը, լրացուցիչ խնդիրներ է առաջացնում տեխնիկայի և բնակիչների համար: Կարևոր է ծրագրի ամբողջական իրականացումը:

Որոշակի աշխատանքներ արդեն կատարվել են վերոնշյալ խնդրի լուծման ուղղությամբ: Նախատեսվում է 2017-2018 թվականի տարեկան բյուջեի միջոցների և տարածքների զարգացման հիմնադրամի կողմից համատեղ ֆինանսավորմամբ կայացնել մեքենատրակտորային պարկը, որի համար անհրաժեշտ է նախնական գնահատմամբ 2,5 -3 մլն դրամ:

ԾՐԱԳԻՐ 5

ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՔՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԲԱՐԵԿԱՐԳՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԿԱՆՈՆԱԿԱՐԳՈՒՄ:

Վայք համայնքում այժմ իրականացվում են աղբահանման աշխատանքներ, մասնավորապես շաբաթը երկու անգամ կազմակերպվում է կենցաղային աղբի տեղափոխում, համայնքի խոշորացումից հետո Վայք համայնքում ընդգրված Ազատեկ, Փոռ, Արին, Ջեղեա համայնքներում աղբահանություն երբևէ չի իրականացվել: Աղբը անխնա թափվում է բնակավայրերին մոտիկ ծորակներում, ճանապարհներից ոչ հեռու տարածքներում, որը իրական աղետ է շրջակա միջավայրի, հարակից պտղատու այգիների և ընտանի կենդանիների համար: Հետևաբար անհրաժեշտ է համայնքում իրականացնել շաբաթական 2-3 աղբահանում, տեղափոխել առաջացած ամբողջ աղբը, ավելացնել համայնքում առկա աղբամանների թիվը:

Նախատեսվում է համայնքային բյուջեից ամենամյա ֆինանսական միջոցներ հատկացնել ծրագրի իրականացման համար 2017-2021թթ-ին, որի համար նախատեսվում է համայնքնի սեփական եկամուտներից տարեկան տրամադրել 15-20 մլն դրամ:

ԾՐԱԳԻՐ 7

ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՁԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ:

Վայք համայնքը նույնպես գտնվում է զբոսաշրջության զարգացման գործընթացում: Այստեղով են անցնում դեպի Ջերմուկ առողջարանային քաղաք, Արցախ, Սյունիք, Իրանի իսլամական հանրապետություն տանող խաչմերուկները: Տարեցտարի ավելանում է մեր Վայքում կանգ առնող զբոսաշրջիկների թիվը: Վայք համայնքը հանդիսանում է հարուստ զբոսաշրջային ներուժ ունեցող համայնք, սակայն հանրապետության տուրիզմի շուկայում չափազանց համեստ տեղ է զրավում: Այստեղ հնարավոր է զարգացնել էկոտուրիզմը, ագրոտուրիզմ, այցելություններ պատմական հուշարձաններ, պատմական վայրեր: Վայք համայնքի ռեսուրսները նպաստում են զբոսաշրջության վերը նշված ձևերի զարգացմանը, մասնավորապես համայնքի տարածքում են գնտվում թվով 7 ժամանակակից ռեստորանա հյուրանոցային համալիրներ, 3-4 հյուրատներ:

Այսպիսով նախատեսվում է համայնքում վերը նշված միջոցներով առաջիկա 5 տարիներին՝ 2017-2021թթ. ավելացնել հյուրատների քանակը, հասցնելով մինչև 20-ի: Ինչպես նաև զարգացնել ագրոտուրիզմը՝ զբոսաշրջային սեզոնին կազմակերպել այցեր ոչ միայն պատմամշակութային վայրեր, այլև մասնակցություն բերքահավաքի, գինու և այլ գյուղատնտեսական արտադրանքների պատրաստման գործընթացներին: Կազմել տուրեր տուրիզմ նախընտրողների համար:

ԾՐԱԳԻՐ 8

ԳՅՈՒՂԱԿԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐՈՒՄ ՍԱՆԿԱԿԱՆ ԽԱՂԱՀՐԱՊԱՐԱՐԱԿՆԵՐԻ ԱՏԵՂԾՈՒՄ

Վայք համայնքում 4-15 տարեկան բնակչության թիվը կազմում է շուրջ 994: Գյուղական բնակավայրերում բացակայում են ժամանցի վայրերը, հանգստի գոտիները, զբոսայգիները, այս ամենը դժվարություններ է ստեղծում մատաղ սերնդի դաստիարակության համար: Հետևաբար օրակարգային խնդիր է համայնքում մանկական խաղահրապարակների ստեղծումը, ինչը կունենա մի քանի դրական արդյունքներ.

- Այն կդառնա հավաքատեղի համայնքի երիտասարդ մայրերի և երեխաների համար
- Կստեղծվեն խաղային գործիքներ, վարժասարքեր, ճոճանակներ
- Կկազմակերպվեն ժամանցային խաղեր

Ծրագիրը նախատեսվում է կյանքի կոչել միջազգային դոնոր կազմակերպությունների աջակցությամբ, որի դեպքում համայնքը կհատկացնի համայնքային նշանակության հողատարածք խաղահրապարակներ կառուցելու համար:

Ծրագիրը կյանքի կոչելու դեպքում համայնքը կդրամադրի համայնքի սեփականություն հանդիսացող հողատարածք, անհրաժեշտ գումարը ակնկալվում է ստանալ միջազգային դոնոր կազմակերպություններից՝ 30 մլն դրամ՝ չորս գյուղական բնակավայրերի համար: